ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-21/04

ք. Երևան «25» 08 2021թ.

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Անի Բաղդասարյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Ազուռ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ա.ման Երիջանյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է կենցաղային տնտեսական ապրանքների մատակարարման պարտավորությունը (այսուհետ՝ ապրանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ապրանքը մատակարարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատակարարվող ապրանքի որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատակարարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ապրանք.

ա) Չընդունել ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանք պայմանագրին համապատասխանող ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատակարարված ապրանքի արդյունքը, իսկ մատակարարման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ապրանքների մատակարարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատակարարված ապրանքնը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Վաճառողի մատակարարման ենթակա ապրանքի գինը կազմում է 391 950 (երեք հարյուր իննսունմեկ հազար ին հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում մատակարարված ապրանքի՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ապրանքը մատակարարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են մատակարարվող ապրանքների ծավալների կամ ձեռք բերվող ապրանքների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքների մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայություն	«ԱԶՈՒՌ» ՍՊԸ
ք. Երևան, Մաշտոցի 47	ք. Երևան,
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Նորք 1-ին նրբ., 5 տ.
	«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 90011021954	Հ/Հ 220553336078000
ՀՎՀՀ 00183253	ՀՎՀՀ 02288121
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Ա. Բաղդասարյան	---------- Ա. Երիջանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
«25» «08» 2021թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-21/04» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիր	չափման միավոր	ընդհանուր քանակ	միավոր ապրանքի գին	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	Մատակարարման	
							հասցե	ժամկետը**
1.	24911700/4	Սոսինձ, նախատեսված կենցաղում արագ նորոգման աշխատանքների համար: Սոսնձում է ակնթարթորեն: Կիրառելի չէ պոլիէթիլենի, պենոպլաստի, պոլիպրոլինի և սինթետիկ կտորների սոսնձման համար:	կգ	1	1520	1520	Ք. Երևան, Մաշտոցի 47	Պայմանագրի կնքման պահից մինչև 30 օրվա ընթացքում
2.	24911300/1	ՊՎԱ էմուլսիա, նախատեսված մանրահատակի, փայտի, ստվարաթղթի, լինոլեումի, պաստառների, կաշվե և այլ իրերի սոսնձման համար:	կգ	1	1400	1400		
3.	24911500/2	Սոսինձ, նախատեսված փայտի, մետաղի, պլաստմասե, տեքստիլի հետ սահուն և ծակոտկեն մակերեսները սոսնձելու համար:	հատ	3	1400	4200		
4.	39831245/5	Օճառ հեղուկ, նախատեսված որպես ձեռքի հակաբակտերիալ, հիգիենիկ և կոսմետիկ լվացող	լիտր	140	222	31080		

		միջոց, ցանկացած բույրի և գույնի, պահպանման ժամկետը՝ երկու տարի:						
5.	39831100/3	Սպասք լվանալու հեղուկ, առատ փրփրող, լվանում է ճարպը և այլ աղտոտվածություններ, պահպանման ժամկետը՝ երկու տարի:	լիտր	15	210	3150		
6.	39831247/3	Զուգարան մաքրող հեղուկ, ախտահանող, դեղին հետքերի, կրային նստվածքի, ժանգի, դժվարանցանելի հետքերի դեմ:	լիտր	40	552	22080		
7.	39531700/5	Ուղեգորգեր, տակի շերտը ռետինե, արտաքին շերտը ծղոտե, երկարությունը՝ 116սմ-լայնությունը՝ 73սմ:	մ²	2	6000	12000		
8.	39531700/1	Ուղեգորգեր, տակի շերտը ռետինե, արտաքին շերտը կտորից, երկարությունը՝ 58 լայնությունը՝ 38սմ:	մ²	1	4000	4000		
9.	39531700/6	Ուղեգորգեր, տակի շերտը ռետինե, արտաքին շերտը կտորից, երկարությունը՝ 75սմ-լայնությունը՝ 48սմ:	մ²	3.3	4000	13200		
10.	19641000/3	Աղբի տոպրակ պոլիեթիլենային, սև կամ կապույտ, աղբը հավաքելու համար, ծավալը 30լ, փաթեթում 30 հատ:	հատ	250	180	45000		
11.	44411742/3	Զուգարանակոնքի մեխանիզմ՝ լրակազմ, սեղմովի՝ 2 սեղմակով:	լրակազմ	12	2400	28800		

12.	44511200/3	Այգեգործության մեջ կիրառվող ձեռքի սղոց՝ ծառի ճյուղերը կտրելու համար, երկարությունը՝ 45սմ, լայնությունը՝ 10 սմ, մետաղի հաստությունը 1.5մմ:	հատ	2	2400	4800		
13.	44511371/5	Գայլիկոնների, պտուտակահանի և բիտերի հավաքածու՝ 80 կտորից:Պատրաստման նյութը՝ քրոմ, վանադիում, պողպատ:	լրակազմ	1	26760	26760		
14.	44511371/6	Մանեկադարձ բանալիների հավաքածու՝ 8 կտոր: Պատրաստման նյութը՝ քրոմ, վանադիում, պողպատ:	լրակազմ	1	7710	7710		
15.	24451141/8	Սպիտակեցնող և ախտահանող միջոց՝ ժավել:	լիտր	110	65	7150		
16.	24451141/6	Ձեռքի հակամանրէային ախտահանիչ՝ ալկոգել: Նախատեսված բազմակի օգտագործման համար, հետքեր չի թողնում:	լիտր	35	1380	48300		
17.	24451141/7	Հակամանրէային ախտահանիչ նյութ, բաղադրությունը՝ էթիլ սպիրտ 65%, ջրածնային պերօքսիդ և այլ հավելումներ: Ախտահանման շրջանակ՝ հասարակական վայրեր, ձեռքերի հիգիենիկ մշակում և ախտահանում:	լիտր	70	1220	85400		
18.	31651400/1	Ինքնակպչուն Էլեկտրամեկուսիչ ժապավեն, երկարությունը՝ 9մ:	հատ	20	120	2400		

19.	44163200/3	Խողովակի միացման մաս՝ անցում, չափսը՝ 3/4- 1 դույմ, նախատեսված ոռոգման սարքը խողովակին միացնելու համար:	հատ	10	650	6500		
20.	42671180/1	Սկավառակ լարային, նախատեսված խոտնինձիչ մեքենայի համար:	հատ	4	2500	10000		
21.	43321120/2	Ոռոգման սարք՝ ցնցուղ, խողովակներին ամրացվող, ջրման շառավիղը նվազագունը 2.4 մ, գործառնական ճնշումը 2.1 մ,. ջրում է ցանկացած անկյան տակ, շառավիղը 25 %-ով նվազեցնելու հնարավորություն:	հատ	10	2650	26500		
							ԸՆԴԱՄԵՆԸ՝	391950

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության պետական
վերահսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 90011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Բաղդասարյան
/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱՋՈՒՌ» ՍՊԸ
ք. Երևան,
Նորք 1-ին նրբ., 5 տ.
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220553336078000
ՀՎՀՀ 02288121

Տնօրեն՝

_____ Ա. Երիջանյան
/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«25» 08 2021թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-21/04» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ ՀՀ դրամ

Ապրանք														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	24911700/4	Սոսինձ (սուպեր 502)									1520	1520	1520	1520	1520
2	24911300/1	Սոսինձ՝ հեղուկ									1400	1400	1400	1400	1400
3	24911500/2	Սոսինձ աէորոզոլ									4200	4200	4200	4200	4200
4	39831245/5	Օճառ, հեղուկ									31080	31080	31080	31080	31080
5	39831100/3	Լվացող նյութեր									3150	3150	3150	3150	3150
6	39831247/3	Ախտահանիչ հեղուկ սանհանգույցի համար										22080	22080	22080	22080
7	39531700/5	Ուղեգորգեր (ծղոտե)									12000	12000	12000	12000	12000
8	39531700/1	Ուղեգորգեր									4000	4000	4000	4000	4000
9	39531700/6	Ուղեգորգեր									13200	13200	13200	13200	13200
10	19641000/3	Պոլիէթիլենայի ն աղբի տոպրակ										45000	45000	45000	45000
11	44411742/3	Զուգարանակ ոնքի մեխանիզմ									28800	28800	28800	28800	28800
12	44511200/3	Ձեռքի սղոց									4800	4800	4800	4800	4800
13	44511371/5	Գործիքների հավաքածու										26760	26760	26760	26760

14	44511371/6	Գործիքների հավաքածու									7710	7710	7710	7710	7710
15	24451141/8	Ախտահանիչ հեղուկ նյութեր									7150	7150	7150	7150	7150
16	24451141/6	Ախտահանիչ հեղուկ նյութեր										48300	48300	48300	48300
17	24451141/7	Ախտահանիչ հեղուկ նյութեր									85400	85400	85400	85400	85400
18	31651400/1	Մեկուսիչ ժապավեններ									2400	2400	2400	2400	2400
19	44163200/3	Խողովակներ ի միացման մասեր									6500	6500	6500	6500	6500
20	42671180/1	Ձեռքի գործիքների մասեր									10000	10000	10000	10000	10000
21	43321120/2	Ոռոգման սարքեր									26500	26500	26500	26500	26500
ԸՆԴԱՄԵՆԸ՝											***249810***	***391950***	***391950***	***391950***	***391950***

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության պետական
վերահսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 90011021954
ՀՎՀՀ 00183253

Գլխավոր քարտուղար՝

---------- Ա. Բաղդասարյան
/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԶՈՒՌ» ՍՊԸ
ք. Երևան,
Նորք 1-ին նրբ., 5 տ.
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220553336078000
ՀՎՀՀ 02288121

Տնօրեն՝

---------- Ա. Երիջանյան
/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 3
«25» օգոստոսի 2021թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-21/04» ծածկագրով պայմանագրի

ԳՆՈՐԴ

«ԱԶՈՒՌ» ՍՊԸ
ք. Երևան,
Նորք 1-ին նրբ., 5 տ.
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ԲԲԸ
Հ/Հ 220553336078000
ՀՎՀՀ 02288121

ՎԱՃԱՌՈՂ

Հայաստանի Հանրապետության պետական
վերակսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
ֆինների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 90011021954
ՀՎՀՀ 00183253

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2021թ.

Պայմանագրի անվանումը՝ Պետական վերահսկողական ծառայության կարիքների համար կենցաղային տնտեսական ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2021թ.
Պայմանագրի համարը՝ «ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-21/04»
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2021թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարվող ապրանքների							
	Անվանումը	Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման Ժամկետը /ըստ վճարման Ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1.								
2.								

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Ապրանքն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Հավելված 3.1
« » 2021թ. կնքված
«ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-21/04» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ազուռ» ՍՊԸ (այսուհետ՝ Կատարող) միջև 2021թ. օգոստոսի -ին կնքված N «ՊՎԾ-ՄԱԱՊՁԲ-20/04» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2021թ. -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն